Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Հասարակագիտություն>> /10 դասաժամ/, <<Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն>> /10 դասաժամ/, <<Ինֆորմատիկա>> /1 դասաժամ/, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> /8 դասաժամ/, <<Հայոց պատմություն>> /9 դասաժամ/, <<Ֆիզիկա>> /10 դասաժամ/, <<Մաթեմատիկա>> /15 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. հոկտեմբերի 28-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. նոյեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանքի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 47-17-20 հեռախոսահամարով: